
**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՄՈՀԱՄՄԱԴ ՄԱԼԵՔ ՄՈՀԱՄՄԱԴԻ (ԻԻՀ, Բ. ՍՊԱՀԱՆ)՝

Հ. Մ. Ամալյանը հայ բառարանագրության պատմությունը բաժանել է 3 հիմնական շրջանների¹. 1. միջնադարյան շրջան՝ սկզբից մինչև XVII դարի երկրորդ քառորդը, մինչև Ռիփոլայի բառարանի երևան գալը,² 2. նոր շրջան կամ նախախորհրդային շրջան՝ XVII դարի երկրորդ քառորդից մինչև մեր դարի 20-ական թվականները, 3. հայ բառարանագրության խորհրդային շրջանը:

Հայ նոր բառարանագրության շրջանում ստեղծվում են հայ բանասիրության գլուխգործոցները՝ Նոր Հայկազյան, Աճառյանի հայերեն արմատական ու Մալխասյանցի բացատրական բառարանները:

XVII-XX դդ. հայ բառարանագրությունը հարուստ պատմություն է ունեցել և, բացի մատենակից բառարաններից, երկրագնդի 45 հայագիտական և հայաշատ բնակավայրերում 280-ից ավելի հայագետներ հրատարակել են 320 բառարան³: Կ. Պոլիսը մեծ ավանդ է ունեցել հայ բառարանագրության ասպարեզում: Հայ բառարանագրության ասպարեզում հայերեն առաջին տպագիր բառարանը՝ «*Dictionarium Armeno-Latinum*», կազմել է Ֆ. Ռիփոլան և հրատարակել 1621 թ. Միլանում, իսկ 1633 թ. երկրորդ հրատարակությունը՝ Փարիզում:

Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»⁴ աշխատությունը, որ հրատարակվել է 1698 թ. Ալիկոռնայում (Իտալիա), ապա՝ Կոստանդնուպոլսում, հայ բառարանագրության սկզբնաղբյուր հանդիսացող և առաջին տպագիր հայերեն բացատրական բառարանն է, որը զգալի դեր է ունեցել հայ բառարանագրության բնագավառում: Մրանից օգտվել են միջին հայերենի բառապաշարին նվիրված բառարանների հեղինակները, ինչպես Նորայր Բյուզանդացին, Հր. Աճառյանը, Գ. Ջահուկյանը⁵:

¹ Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Ե., 1966:

² Մինչև XVII դար հայ բառարանագրությունը սահմանափակվում էր փոքրածավալ բառացանկերով և բառարաններով, որոնք բավարարել են ժամանակաշրջանի մշակութային կյանքի պահանջները:

³ Անթոյան Ս., Գասպարյան Դ., Հայ բառարանագրության պատմություն (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1989, էջ 267): [http://hpj.asj-oa.am/5129/1/1989-1\(104\).pdf](http://hpj.asj-oa.am/5129/1/1989-1(104).pdf)

⁴ Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ալիկոռնա, 1698, 1729:

⁵ Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս Ղազարյան Ռ., Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010: Ակինեան Ն., Հայերեն արմատական բառարան (Հանդես ամսօրեայ, 1930, էջ 491): Ամալյան Հ., նշվ. աշխ.:

1749 թ. հրատարակվում է հայ բառարանագրության հայր՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի առաջին հատորը՝ նոր գիտական մոտեցումներով:

Ինչ վերաբերում է միջին հայերենի (XII-XVI դդ.) բազմալորտ թարգմանական և հեղինակային մատենագրության բառապաշարին նվիրված բառարաններին, ապա պետք է նշել, որ միջին հայերենի բառապաշարի զգալի մասն առ այսօր անտիպ մատենագրության և միջին հայերենի չհրատարակված բառարանների պատճառով դուրս է մնացել բանասիրական և ստուգաբանական ուսումնասիրությունների տեսադաշտից:

Ինչպես հայտնի է, միջին հայերենը, որի հիմնական առանձնահատկություններն ուրվագծվել են X դարից, տարբերվել է գրաբարից իր հնչյունական ու քերականական համակարգով և բառապաշարի հիմնական դրսևորումներով:

Հր. Աճառյանը Հայերեն արմատական բառարանի նախաբանում հիշատակում է, որ միայն ոսկեդարյան և հետոսկեդարյան հայերենի շրջանի բառերն են հավաքված Արմատական բառարանում, իսկ ստորին կամ միջին հայերենի շրջանի բառերը՝ ոչ⁷:

Պետք է նկատել, որ ցայսօր հայերենագիտական ուսումնասիրությունների համեմատաբար գերակշռող մասը նվիրված է հին և նոր հայերենին,⁸ իսկ միջին հայերենի և հատկապես հարակից լեզուներից կատարված փոխառությունների հարցը պատշաճ ուսումնասիրված չէ: Հիմնական պատճառը, հավանաբար, միջին հայերենի շրջանին պատկանող բոլոր ձեռագրերի հրատարակված չլինելու խնդիրն է եղել: Հարցը կարևորվում է այն տեսակետից, որ միջին դարերում հայ-իրանական, հայ-արաբական մշակութային, գրական, գիտական, քաղաքական և տնտեսական հարաբերությունները զարգացել են, և բնականաբար ընդլայնվել են լեզվական փոխազդեցությունները: Վաստակաշատ Հր. Աճառյանի ջանքերով կազմվել է արժեքավոր Հայերեն արմատական բառարանը, որտեղ ներկայացված են հիմնականում հին հայերենի բառապաշարի ստուգաբանությունները: Արմատական բառարանի նախաբանում Հր. Աճառյանը, հայոց լեզվի մատենագրությունը բաժանելով հինգ շրջանի (ոսկեդարյան շրջան, հետոսկեդարյան կամ հետին հայերենի շրջան, ստորին կամ միջին հայերենի շրջան, գավառական հայերեն, նոր կամ աշխարհաբար հայերենի շրջան), հիշատակում է, որ հիշյալ հինգ շրջաններից առաջին երկուսի բառերն են միայն հավաքված Հայերեն

⁶ Միջին հայերենի մասին տե՛ս Այտընեան Ա., Քննական քերականություն արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 142-146: Ղազարյան Ա., Միջին հայերեն, Ե., 1960: Ակնարկներ միջին հայերենի պատմության, Ա., Ե., 1972: Ակնարկներ միջին հայերենի պատմության, Բ., Ե., 1975: Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009: Ղազարյան Ա., Միջին հայերեն, գիրք Ա.: Karst J. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901.

⁷ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Ա. հատ., էջ 7:

⁸ Հայերենի իրանական փոխառությունների մասին տե՛ս Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, Նույնի՝ Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005:

արմատական բառարանում, և հստակեցնում է, որ ստորին հայերենի բառարան բնավ չկա, իսկ գավառական հայերենի համար հրատարակված են Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշապատ, 1912) և Հ. Աճառյանի «Գավառական բառարանը», (Թիֆլիս, 1913)⁹:

Միջին հայերենի համեմատաբար ամբողջական բառապաշարին նվիրված բառարանագրական արժեքավոր փորձեր են կատարվել: Այդ ուղղությամբ կատարված հիմնական բառարաններն են՝ 1885 թ. Նորայր Բյուզանդացու (1845-1915) «Բառգիրք ստորին հայերենի (ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Յո. Կարստի (1871-1962թթ.) «Wörterbuch des Mittelarmerischen» անտիպ բառարանը՝ 1978 թ. (I հատոր), 1992 թ. (II հատոր), ապա 2009 թ. (մեկ հատորով) Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»:

Ժամանակագրական առումով միջին հայերենի բառապաշարին նվիրված առաջին բառարանը կարելի է համարել Նորայր Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց» երկը, որն ավարտել է 1885 թ., իսկ հրատարակվել է 2000 թ.: Կոթողային եզակի երևույթ բացատրական-ստուգաբանական բնույթի Նոր հայկազյան բառարանում¹⁰ գրեթե սպառիչ ներկայացված են հին գրական հայերենի (գրաբարի) բառապաշարը և բազմակողմանիորեն ենթարկված բառարանագրական մշակման: Այս բառարանում առաջին անգամ բուն միջին հայերենյան մի ամբողջ շարք բառեր որոշակիորեն սահմանազատվում են գրաբարի բառերից՝ Ռմկ. (Ռամկօրեն) նշումով¹¹:

Բնչպես նշվեց, միջին հայերենի բառամթերքին նվիրված վերոհիշյալ երեք բառարաններից միայն Յո. Կարստի բառարանը դեռևս չի հրատարակվել, սակայն կատարվում են արժեքավոր այս աշխատանքի հրատարակման վերջին փուլերը՝ VW-ի¹² հովանավորությամբ:

Անդրադառնանք վերոհիշյալ բառարանների կառուցվածքի բնութագրմանը և որոշ առանձնահատկություններին:

Նորայր Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի» ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց:

⁹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Ա. հատ., էջ 7: Աճառյան Հր., Հայերեն գաղափարական բառարան, Էմինենտ Ազգագրական ժողովածու, հրատարակությամբ Լազարեան ձեմարանի Արևելեան լեզուաց, Թ. հատ., Թիֆլիս, 1913:

¹⁰ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37:

¹¹ Ղազարյան Ռ., նշվ. աշխ., էջ 211:

¹² VolkswagenStritung, Between Europe and the Orient – A Focus on Research and Higher Education in/on Central Asia and the Caucasus (<http://titus.uni-frankfurt.de/curric/konftbil/readercpl.pdf>)

Միջին հայերենի բազմադարյան մատենագրության բառապաշարն առաջին անգամ ամփոփվում է մեծանուն հայագետ Ն. Բյուզանդացու (1845-1915) արժեքավոր աշխատության՝ «Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց» երկում։ Նա միջին հայերենի բառամթերքի մասին հիշատակում է, «...որ երկհատոր Հայկազեան բառարանի ստուարութեամբ ստորին հայերենի ալ բառարան մը կրնայ կազմուիլ, այնչափ ճոխ է այս լեզուն բառերու, ոճերու, ձևերու և ասացուածոց մասամբ»¹³։ Նրա աշխատության ձեռագիրը պահվում է Շվեդիայի Գյոթեբորգ քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանի ձեռագրերի բաժնում¹⁴։ Ձեռագիրը բաղկացած է հինգ հատորից։ Ըստ հեղինակի նշումների՝ 4-րդ հատորը ավարտել է 1885 թ. նոյեմբերի 23-ին, իսկ 5-րդը, որն ընդգրկել է «պէտք» բառից մինչև **Ֆ** տառը անմշակ վիճակում է։ Բառարանում գլխաբառից հետո տրվում են հոլովական և խոնարհման ձևերը, նշվում է քերականական կարգը, այնուհետև, եթե բառը փոխառված է, տրվում է օտար աղբյուրը, երբեմն բառի ստուգաբանությունը, որը ստուգաբանական արժեք է տալիս բառարանին։ Ապա բացատրվում է բառը, միջնադարյան հայ մատենագրությունից բերվում են վկայություններ՝ բառի յուրաքանչյուր իմաստը և իմաստային ներբերումը հաստատելու համար¹⁵։

2000թ. Մ. Մինասյանի ջանքերով սակավաթիվ տպաքանակով հրատարակվում է միջին հայերենի բառապաշարին նվիրված սույն արժեքավոր բառարանը, որն ընդգրկում է ԺԱ-ԺԷ դարերի մատենագրության մեջ վկայված հայերեն կամ հայերենացած բառերը։ Բառարանը ներառում է ձեռագրի վերոհիշյալ 5 հատորները։ Հինգերորդ հատորը ևս Մ. Մինասյանի մշակմամբ հավելվում է բառարանին։ Բառարանն ունի «Անունք մատենագրաց և մատենագրութեանց յիշատակելոց ի բառարանիս» ցանկը, որտեղ աստղանիշներով առանձնացվել է մինչև հեղինակի ապրած ժամանակաշրջանը տպագրված գրականությունը։ Բառարանն ունի ևս մեկ հավելված՝ «Ցուցակ մատենագրութեանց և թարգմանութեանց ԺԲ-ԺԷ դարուց», որը հայտնաբերել է Մ. Մինասյանը հեղինակի անտիպներում։

Նորայր Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց» երկը համարվում է Նոր հայկազյան բառարանի օրգանական շարունակությունը։ Նա իր բառարանում «նույնիսկ հաճախ դուրս է եկել սովորական բառարանի սահմաններից և յուրաքանչյուր բառահոդվածը կազմելիս տվել է ինչպես բառի բացատրությունը, նույնպես և երբեմն բառի ստուգաբանությունը, սխալ գրչությունները, բարբառային ձևերը և այլն։ Սակայն ոչ բոլոր բառերն են բացատրված կամ վկայու-

¹³ Բյուզանդացի Ն., Փորձ, 1879, 7-8, էջ 247։

¹⁴ Göteborgs Stadsbibliotek, - 1, 2, 3, 4 տե՛ս Նորայր Բյուզանդացու դիւանի նիւթերի ցանկ (Բազմավէպ, 1983, 1-4, էջ 221-222, թ. 673-676)։

¹⁵ Ղազարյան Ռ., նշվ. աշխ., էջ 99։

թյուններով հաստատված, համենայն դեպս այն, ինչ որ կարելի է, կամ պատասխանել է Բյուզանդացին, հայագիտության համար մեծ արժեք ունի»¹⁶:

Ն. Բյուզանդացին իր բառարանում ուսումնասիրում է «հայ մատենագիրների երկրում գրիչների կողմից մտցված փոխառությունները, ուղղում նրանց կատարած սխալները, վերականգնում բազմաթիվ տեքստեր և ամենից գլխավորը, կազմում միջին հայերենի բառարանը, որը հայտնաբերվել է 1945 թվականին»¹⁷:

Ինչ վերաբերում է այս բառարանում օգտագործված միջնադարյան հայկական հարուստ մատենագրությանը, ապա Մ. Մինասյանը տալիս է հետևյալ գնահատականը. «Միջին հայերենի բառարան արժեքավոր աշխատության (Երևան, 1987) զույգ հեղինակները լրիվ չեն օգտվել մատենադարանում Նորայրի այս անտիպ գործի մանրաժապավենից»¹⁸:

Ն. Բյուզանդացու այս արժեքավոր բառարանի վերջում (էջ 753-767) նշվում են այն բոլոր մատենագիրների և մատյանների անունները, որոնք հիշատակվել և օգտագործվել են բառարանում, իսկ հետագայում խմբագիրը հայտնաբերում և հավելվածի ձևով այս մատենագիտական ցուցակը լրացնում է առանձին ցուցակով: Վերջինս ընդգրկում է ԺԲ-ԺԷ դարերի մատենագրական և թարգմանական գրականության ցանկը: Այս ամենը վկայում է հարուստ գրականության մասին, որն իր ձեռքի տակ է ունեցել Ն. Բյուզանդացին՝ հարստացնելով բառարանի բառապաշարը:

Պետք է նշել, որ Ն. Բյուզանդացին իր «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն»¹⁹ արժեքավոր աշխատանքում նույնպես լայնորեն անդրադաձել է միջին հայերենի բառապաշարին: Նա սույն բառարանի առաջաբանում հիշատակում է. «Ուր ուրեք լռէին դպրութիւնք ոսկի և արծաթի դարուց /Ե-ԺԲ/, ոչ ինչ խղճեցի առնուլ ընտրանաւ բառս և ի մատենագրաց խոնարհագոյն դպրուց /ԺԳ-ԺԷ/, և առ որոշելոյ զայնոսիկ ի բուն ի հնոցն՝ նշանակեցի առնթեր զգլխագիրն՝ Ս., իբր Ստորին հայերէն»²⁰:

¹⁶ Ղազարյան Ռ., նշվ. աշխ., էջ 100:

¹⁷ Ղազարյան Ռ., նշվ. աշխ., էջ 96:

¹⁸ Բիւզանդացի Ն.Ն., Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժնն, 2000, էջ 3: Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. I, II, Ե., 1978, 1992: Այս բառարանի մասին գրախոսությունները տե՛ս Վարդանյան Յու., Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, 1987, (ՊԲՀ, 1988, հ. 3, էջ 206-214): Մկրտչյան Ն., Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., հ. II, 1992 (ՊԲՀ, № 1-2, 1993, էջ 195-198):

¹⁹ Բիւզանդացի Ն., Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Վոստանդնուպոլիս, 1884: Neandre (Norayr) De Byzance, Dictionnaire Francais-Armenien, Constantinople, Imprimerie A. H. Boyajian, 1884.

²⁰ Բյուզանդացի Ն., նշվ. աշխ. առաջաբանը:

Կարստի «WÖRTERBUCH DES MITTELARMENISCHEN» անտիպ բառարանի ընդհանուր բնութագրությունը²¹:

Գերմանացի լեզվաբան-հայագետ Յոզեֆ Կարստը (1871-1962 թթ.)՝ Հ. Հյուբշմանի աշակերտը, իր ուսումը ստացել է Ստրասբուրգի Վիլհելմ կայսեր անվան համալսարանում, որտեղ ուսումնասիրում է հնդկական բանասիրություն, պարսկերեն, ասորերեն, արաբերեն և հայերեն: 1899 թ. պաշտպանել է «Կիլիկյան հայերենի արտասանությունն ու ձայնավորները» թեմայով դոկտորական ատենախոսությունը²² և դասավանդել նույն համալսարանում: Վաստակաշատ հայագետը հեղինակել է մի շարք արժեքավոր աշխատանքներ, ինչպես X դարի հայ պատմիչ Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմութեան» գերմաներեն թարգմանությունը, «Հայ բանասիրության պատմությունը», «Հայկովկասյան և Հեթիթա-ասիական առասպելաբանությունը» IV դարի հույն հեղինակ, Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությունը»²³ գերմաներեն թարգմանությունը և մի շարք անտիպ երկեր: Նրա «Միջին հայերենի բառարանը» բացառիկ գիտական արժեք է ներկայացնում: Յո. Կարստը իր 90-ամյա կյանքի 70 տարիները նվիրել է հայագիտությանը²⁴, իսկ իր «Միջին հայերենի բառարանի» վրա աշխատել է մոտ 30 տարի: Հայագիտական, բասկագիտական (*Basque language*) և կովկասագիտական ուսումնասիրությունները Կարստի գիտաստեղծագործական հիմնական ուղիներն են: Ազգագրության, համեմատական դիցաբանության, իրավագիտության, դրամագիտության, մարդաբանության և գրականագիտության ասպարեզում նաև իր ուրույն ավանդն է ունեցել²⁵:

Կարստի «Միջին հայերենի բառարանը» ընդգրկում է նախաբան, օգտագործած գրականության ցանկ, գրականության պատմություն և բացատրություններ բառարանի կառուցվածքի մասին:

²¹ Կարստի Միջին հայերենի բառարանի վրա աշխատել ենք 2010-2014 թթ. Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

²² Karst J. Aussprache und Vocalismus des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901.

²³ «Eusebius' Chronicle was written in about 325 A.D. It contained Chronological Tables from the earliest times down to the reign of the emperor Constantine. These tables were widely copied, and are best known through the Latin translation of St. Jerome. Eusebius also published the evidence for some of the dates in the tables, mostly in the form of excerpts from earlier writers. Most of the original Greek text of the Chronicle has been lost. This translation is based on a Latin translation of the Armenian translation of the Greek original, in the Schoene-Petermann edition. However it is not intended to be a literal translation of the Armenian text. For instance, it attempts to make use of the Greek text, where evidence for it exists, especially in the spelling of proper names, which may be hard to recognize in their Armenian form. The Armenian text was translated very accurately into German by Josef Karst.» (Available at: <http://www.attalus.org/translate/eusebius.html>)

²⁴ Կարստի մասին մանրամասն տե՛ս Հ.Յ.Տ., Կիլիկյան հայերենը (Հանդես ամսօրեայ, 1900, ԺԴ. տարի, յունուար, էջ 17-20): Մբգարյան Գ., Յոզեֆ Կարստի անտիպ Միջին հայերենի բառարանը (Բանբեր Երևանի համալսարանի, 1995, № 2 /86/, էջ 183-186): Գազինյան Ա., Յոզեֆ Կարստի լեզվաբանական հայացքները, Ե., 2008: Պետրոսյան Հ. Ջ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

²⁵ Գազինյան Ա., նշվ. աշխ., էջ 9-10:

Իրականում Կարստի բառարանը միջին հայերենի պատմական-ժազումնաբանական բառարանն է, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվել միջին հայերենում օգտագործված բուսանունների և դեղանունների ժազումնաբանությանը, ներկայացվել են նրանց ժազումը արաբերենում, պարսկերենում, վրացերենում, հունարենում, լատիներենում և այլ լեզուներում: Բառարանում Կարստը հիմնականում ներկայացնում է բառերի զուգահեռները հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում:

Կարստը իր «Միջին հայերենի բառարանի» ստեղծման նպատակի մասին գրում է. «Այն առաջին հերթին կոչված է ստեղծելու ճիշտ հիմք հայոց լեզվի բնագավառում լեզվահամեմատական հաջող աշխատանքի համար, որքանով այստեղ առաջին անգամ ի մի է բերվում, ըստ բարբառների տարբերակվում և համեմատվում է միջին շրջանի ամբողջ բառամթերքը, ինչպես նաև փորձ է արվում այն հանգեցնել հին հայերենի հասանելի համարժեքներին, այլև հասցնել մինչև նոր հայերենի բարբառներին, իբրև անհրաժեշտ նախնական աշխատանք հայոց լեզվի պատմական քերականության համար»²⁶:

Յո. Կարստի այս բացառիկ աշխատանքը, որը ներկայումս գտնվում է Մատենադարանի Կարստի անվան արխիվի «Heritage of Josef Karst» 249, 250, 251, 252, 253 և 254 թղթապանակներում՝ թվով 38 վավերագրերի մեջ, ընդգրկում է 7417 թղթեր²⁷: Այս ծավալուն գործի բառերը և նյութերը հավաքվել են երկար տարիների ընթացքում, գրված են հիմնականում թերթիկների վրա²⁸:

Յո. Կարստը գիտալեզվաբանական մոտեցմամբ ներկայացնում է ընդարձակ մի աշխատանք, որը, «ունենալով ստուգաբանական բնույթ և նյութի լայն ընդգրկում, հետապնդում է փոքր-ինչ այլ նպատակ, քան զուտ միջին հայերենի բառամթերքը ներկայացնելն է»²⁹:

Միջին հայերենի բառապաշարին նվիրված սակավաթիվ աշխատանքների համեմատությամբ պետք նշել, որ Կարստի բառարանն ավելի ծավալուն է³⁰ և ընդգրկում է ժազումնաբանական-լեզվաբանական վերլուծություններ և սկզբնաղբյուրների հիշատակումներ ու հեղինակային վկայություններ:

1962թ. Կյուլպենկյանների միջոցով վերոհիշյալ անտիպ բառարանը Փարիզից ուղարկվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարան, որտեղ պահվում է առ այսօր:

²⁶ Karst J. Geschichte der armenischen Philologie, 1930, Heidelberg, S. 43-44. Գագինյան Ա., նշվ. աշխ., էջ 83:

²⁷ Կարստի Միջին հայերենի բառարանի վրա աշխատել ենք 2010-2014 թթ. Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

²⁸ Մատենադարանում պահվող Կարստի արխիվը ծանոթագրել է Ա. Ադամյանը 1963 թ.:

²⁹ Գագինյան Ա., նշվ. աշխ., էջ 87:

³⁰ Տե՛ս Աբգարյան Գ., նշվ. աշխ.:

Կարստը 1956 թ. առաջ դիմել է Միխթարյաններին իր «Միջին հայերենի բառարանը» տպագրելու համար, սակայն հետագա տարիների ընթացքում այն ուղարկվում է Վիեննա, որտեղ տպագրվում են միայն տիտղոսաթերթն ու բառարանի՝ բառացանկի առաջին երկու էջերը, որը սկսվում է Ա տառով, երկայունակ էջերի վրա:

Հատկանշական է, որ ժամանակին Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը օգտվել են Կարստի անտիպ այս աշխատանքից ԵՊՀ հրատարակչությամբ բացատրական-թարգմանչական «Միջին հայերենի բառարանի» համար, որտեղ ներկայացված են միջինհայերենյան շրջանին վերաբերող բառերը և դրանց հայերեն բացատրությունները, իմաստները և որոշ դեպքերում հիշատակվում է փոխառությունների արմատը:

Բառարանի տպագրված տիտղոսաթերթն է՝

WÖRTERBUCH

DES

MITTELARMENISCHEN

HISTORISCH-ETYMOLOGISCH

AUF GRUND DER ALTEN SPRACHE UND UNTER BERÜCKSICHTIGUNG

DER NEUARMENISCHEN DIALEKTE

BEARBEITET VON

J. KARST

Ձեռագրի 8-րդ էջի վրա Կարստի ձեռագրով գրված է՝

J. Karst

Dictionnaire Arménien-Médiéval

ou

Lexique historique-étymologique

de la

Basse-Arménicité

Wörterbuch

des

Mittelarmenischen.

Ձեռագրի 24-րդ էջի ներքևի մասում մատիտով գրվել է «J. Karst, Strasbourg 1940-1942»:

Կարստի «WÖRTERBUCH DES MITTELARMENISCHEN» անտիպ բառարանի սկզբնաղբյուրները և մատենագրությունը

Էջ 25-ը սկսվում է «INTRODUCTION» վերնագրով, որտեղ գերմաներենով համառոտ տալիս է թեմային վերաբերող գրականության ցանկը և սկզբնաղբյուրների համառոտ պատմությունը: Ձեռագրի նախաբանում (էջ 33) նշվում է X դարի «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» հայերեն թարգմանության աշխատանքի վերնագիրը³¹: Դա ապացուցում է

³¹ Այս աշխատանքի մասին մանրամասն տե՛ս Մուրադյան Պ., Պատմութիւն Պղնձէ քաղաքի գրույցի հայկական և վրացական պատումների ու նրանց փոխհարաբերության շուրջ (Բանբեր Մատենադարանի, 1962, հ. 6, էջ 249): Russel R. James. The Tale of the Bronze City in Armenian, Armenian and Iranian Studies, Harvard Armenian Texts and Studies, 9,

հեղինակի մանրակրկիտ ուսումնասիրությունները միջինհայերենյան մատենագրության ոլորտում:

Ձեռագրի 38-րդ էջում «Medizinal-pharmazeutische literatur» վերնագրի ներքո ներկայացվում է միջինհայերենյան բժշկական ոլորտի մատենագրության ցանկը: Իսկ 39-րդ էջում «Mittelarmenische Glossare» վերնագրի տակ հիշատակվում է.

ա. Medizinal wörterbuch-, որտեղ ներկայացվում է հետևյալ մատենագրությունը.

«Թարգմանութիւն անուանցն դեղոց յայլ լեզուացի մերն»,

«Անուանք դեղերոյ. հայերէն և յարապկերէնն. և լադին բառով»,

«Բառք Գաղիանոսի» և այլն:

Իսկ «B»- հատվածում՝ «Glassare Grammatik Dichterischer»-ում, ներկայացվում է հետևյալ մատենագրությունը.

«Մեկնութիւն բառից քերականի: Վերծանութիւն: Ընթերցողութիւն»:

«Այս բառք են քերթողականք... և են որ գեղջուկք են՝ որով ճարտասանքն վարին, զի յաճախապէս փոխաբերին սակս զարդու ճարտասանից և հարկէ յոքնայամար եղանիլ»:

Հիշատակվում է նաև՝ «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս: Բառ ի գեղջուկէ, «Թարգմանութիւն պարսիկ բառի ի Վարդան գրոց», «Բառք խորանին» և այլն:

Էջ 45-ում ներկայացվում է կրոնական և աստվածաբանական մատենագրությունը՝ «Religiös-kirchliche Vulgarprosa», «Theologische Traktate, kanonische»³², իսկ էջ 55-62-ում օգտագործված նշանների և համառոտագրությունների ցանկը,³³

64-73 էջերը «Original-Quellen literatur und Epigraphik» վերնագրով ընդգրկում են օգտագործված գրականության ցանկը՝ միջինհայերենյան մատենագրության (12-16th century) ձեռագիր և տպագիր 84 աշխատանքների տվյալները:

Կարասր օգտագործել է մինչև իր ժամանակաշրջանի թեմային առնչվող համարյա բոլոր հետազոտությունները:

2004, 250-261. Մալեք-Սոհասմաղի Մ., X դ. Պատմութիւն Պղնձէ քաղաքի բնագրի փոխառյալ բառապաշարի շուրջ (Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, էջ 207-220):

³² Vardan V-pet Arevelci (13-th-century) Kirakos Erznkatci (Areveltzi) (13-14-th-century): «Խրատք հոգեշահք ըստ աստիճանի իւրաքանչիւր անձանց»: Yohannes Erzenkatzi: «Խրատ հասարակաց քրիստոնէից՝ քահանայից և ժողովրդոց ի կա-նոնական սահմանաց»: Moses Erzenkatzi: «Խրատք» (Xratk) 14th century. Հիշատակվում է նաև Kostandin Erzengaci, Grigor Aghtamarci, Yohannes Thelkurantci, Hovnatan Naghas՝ և ուրիշ հեղինակների ստեղծագործությունները:

³³ Aj (Ajar.) AWWb = Ajarian: Hay Armatakan Bařaran, I-IV, Yerevan, 1926-1935. Aj. (Ajar.) NA: dwb = Hr. Ajarian, Hayeren Gavarakan Bařaran (Arm. Dialect. Wb. 1913) Tiflis. Aj. (Ajar.) Tr. Lww. = Hr. Ajarian: Turkereni Poxarial barer՝ hayereni meč, Edzmiadzin, 1906. Aj. (Ajar.) Nor Bař. = id. Hayeren Nor Bařer, I, II, Veneziy, 1913, 1922. և թվով 33 ուրիշ աշխատանքներ:

Բացի տպագիր գրականությունից, Կարստը օգտագործել է նաև բազմաթիվ ձեռագրեր, որոնք պահվում էին Վենետիկում և տարբեր վանքերում ու եկեղեցիներում: Նա ուսումնասիրել է միջնադարյան բժշկարանները և դատաստանագրքերը, ինչպես Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրքերը:

Յո. Կարստի վերլուծությունները՝ գրաբարի, միջին հայերենի, պարսկերենի, արաբերենի, վրացերենի, մեգրելերենի և ասորերենի մասին, վկայում են, որ նա տիրապետել է այդ լեզուներին: Նա ներկայացնում է հետաքրքիր հնչյունաբանական և ձևաբանական վերլուծություններ և մանրամասնություններ այդ լեզուների վերաբերյալ: Ի դեպ, ստուգաբանություններ կատարելիս բառերը՝ գրել է պարսկերենի, արաբերենի, վրացերենի և այլ լեզուների այբուբեններով: Տիրապետելով հին լեզուներին՝ հին պարսկերեն, հունարեն, լատիներեն և հին ֆրանսերեն, նա ներկայացնում է այդ լեզուներին պատկանող փոխառությունների ծագումնաբանությունը:

Բառացանկի կառուցվածքը

Բառարանում գլխաբառերը տրված են հայերենով և այբբենական կարգով, որին հաջորդում է տառադարձությունը, ապա տվյալ բառի գերմաներեն, որոշ դեպքերում ֆրանսերեն թարգմանությունը: Հիշատակվում են բառերի գրչագրական տարբերակները կամ բառի բարբառային տարբերակները:

Այնուհետև բառերի գրակշռող մասի համար ներկայացվում են գրավոր աղբյուրներում հանդիպող վկայությունները: Ապա նշվում է նրա ծագումը՝ ստուգաբանական վերլուծություններով:

Մատենադարանում պահվող Յո. Կարստի արխիվի 249 թղթապանակի 2-րդ վավերագիրը սկսվում է բառացանկի Ա-տառով սկսվող բառերով:

Սույն հոդվածում այբբենական կարգով ներկայացնում ենք Կարստի «Միջին հայերենի բառարանում» օգտագործված իրանական ծագմամբ բառապաշարը, բառերի վերաբերյալ ծագումնաբանական վերլուծությունները և մեր դիտարկումները: Անդրադարձել ենք նաև արաբական և թուրքական ծագմամբ փոխառյալ բառապաշարին: Հոդվածում պահպանել ենք Կարստի բառարանի կառուցվածքը՝ գլխաբառերը տրվում են հայերենով, որին հաջորդում է տառադարձությունը, հիշատակվում ենք հղումները տվյալ բառի մասին, հեղինակային մեջբերումները:

Պետք է նշել, որ Կարստը ստուգաբանությունների մի զգալի մասի համար հղում է Հր. Աճառյանի Արմատական բառարանին՝ «Hr. Ajar. A. WWb» համառոտագրությամբ՝ հիշատակելով հատորը և էջը:

Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը». Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը» միջին հայերենի բառապաշարին նվիրված, ժամանակագրական առումով հրատարակված առաջին բառարանն է

(երկհատոր): Բառարանն ընդգրկում է XII-XVI դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված միջին գրական հայերենի բառերը, ոճերն ու դարձվածքները, որոնք ձևախմբատալիս առումով բնորոշ չեն գրաբարին և ընդհանրապես չեն հանդիպում V-XI դարերի մատենագրության մեջ: Բառարանն ընդգրկում է հետևյալ բաժինները՝ բառարանի կառուցվածքը, սկզբնաղբյուրները և դրանց համառոտագրությունը, որտեղ նշվում են 195 աղբյուրների ցուցակը, համառոտագրությունները և բառարանը (էջ 13-834), իսկ գրքի վերջում ներկայացվել է օգտագործված բառարանների ցանկը (էջ 835):

Բառարանը կազմելիս հեղինակներն օգտվել են համապատասխան մատենագրական գրականությունից՝ միջինհայերենյան մատենագիրների տպագիր ու անտիպ աշխատանքներից, տարբեր բովանդակության ձեռագրերից և բնագրերից: Պետք է նշել, որ ժամանակին Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանն օգտվել են Կարստի անտիպ այս աշխատանքից՝ «Միջին հայերենի բառարանի» համար, որտեղ ներկայացված են միջինհայերենյան շրջանին վերաբերող բառերը և դրանց հայերեն բացատրությունները, իմաստները, իսկ որոշ դեպքերում հիշատակվում են փոխառությունների արմատները: Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի սույն բառարանը հիմնականում ստեղծվել է գործնական նպատակներով և իր բազմաոլորտ բառամթերքի, հատկապես ներկայացված բուսանունների, տեղաբույսերի և տարբեր լեզուներից կատարված փոխառություններով հանդերձ՝ իր ուրույն նշանակությունն է ունեցել միջինհայերենյան մատենագրության ուսումնասիրության բնագավառում:

Յու. Վարդանյանը և Ն. Մկրտչյանը Ռ. Ս. Ղազարյանի և Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի» մասին իրենց գրախոսականներում³⁴, բավական կարևոր և գնահատելի համարելով բառարանը, ներկայացնում են որոշ դիտարկումներ և անում հետևյալ եզրահանգումները. բառարանի բառազանձը քաղված է շուրջ 200 միջնադարյան երկերից և ընդգրկում է շուրջ 23000 բառի բացատրություն: Անշուշտ, միջինհայերենյան հսկայածավալ մատենագրության ոլորտի համեմատ, զգալի քանակով բառեր դուրս են մնացել բառարանից, առ այսօր միջինհայերենյան շրջանին վերաբերող բազմաթիվ ձեռագրեր են հրապարակվել, որոնց բառապաշարը չի ընդգրկվել բառարանում³⁵: «Բառարանը ամբողջությամբ չի ներկայացնում նաև իր օգտագործած աղբյուրների բառամթերքը. օրինակ՝ «Մանր ժամանակագրությունների» զույգ հատորների մեջ հրատարակված բնագրերի ունեցած տասնյակ փոխառյալ բառեր չեն քաղվել... նաև Ֆրիկի (XIII դար), Հովասափ Սեբաստացու (XIV դար) և

³⁴ Վարդանյան Յու., Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., *Միջին հայերենի բառարան*, հ. Ա. (Ա-Կ) Ե., 1987 (ՊԲՀ, № 3, 1988, էջ 207-213):

³⁵ Մկրտչյան Ն., *նշ. աշխ.*, 1993, էջ 195:

Հովհաննես Թլկուրանցու (XV-XVI դդ.) երկերի հրատարակությունների հետ բառարանը համեմատելիս»³⁶:

Միջին հայերենի բառապաշարին նվիրված Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում» փոխառությունները, մյուս բառարանների, մանավանդ Ն. Բյուզանդացու միջին հայերենի բառարանի փոխառությունների թվի համեմատ, ավելի շատ են հանդիպում: Բառարանում նախ ներկայացվել են բառերի բուն իմաստները, ապա պարզվել յուրաքանչյուր բառի նախնական ձևը փոխատու լեզվում: Բառարանում առանձնահատուկ տեղ են գրավում փոխառյալ այն բառերը, որոնք անցել են հայերեն թարգմանական գրականության միջոցով, այսինքն՝ գրական փոխառությունները: Թեև սույն բառարանի մասին գրախոսներն իրավամբ արձանագրում են այն փաստը, որ միջինհայերենյան մատենագրության ամբողջական բառամթերքը և փոխառյալ բառապաշարը ամբողջովին արձանագրված չեն բառարանում: Այս կապակցությամբ հատկանշական է, որ բառարանի հեղինակների նպատակը, ամենայն հավանականությամբ, չի եղել միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելը, այլ գործնական մի բառարանի ստեղծումով լրացնել այն բացը և պահանջը, որ զգացվում էր ուսումնական և գիտահետազոտական բնագավառներում: Ինչ վերաբերում է փոխառյալ բառապաշարին, ապա սույն բառարանում արձարծվել է փոխառյալ բառապաշարը, սակայն հեղինակների հիմնական նպատակը միջին հայերենի ստուգաբանական բնույթի բառարան ստեղծելը չի եղել:

Հատկանշական է, որ XVIII դարից սկսած՝ հայ բառարանագիրները, ինչպես, օրինակ, Նոր հայկազյան բառարանի հեղինակները, իրենց աշխատանքներում ներկայացնում էին նաև բառերի ստուգաբանություններ և տարբեր լեզուներից փոխառությունները: Ակադ. Գ. Զահուկյանը այս կապակցությամբ գրում է. «Հայ լեզվաբանության տրադիցիան դեռևս XVIII դարում և XIX դարի սկզբներին՝ նախքան պատմահամեմատական մեթոդի արմատավորումը, փորձեր է կատարել տարբերելու հայերենի և այլ լեզուների միջև եղած ընդհանրությունների երկու տեսակ՝ փոխառություններ և այլ կարգի ընդհանրություններ»³⁷: Հայոց լեզվի բառապաշարի ստուգաբանության ոլորտում արժեքավոր դեր է խաղացել Նոր հայկազյան բառարանը:

Ըստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» տվյալների՝ ավելի քան 530 բառ առաջին անգամ ճշտորեն ստուգաբանել են Նոր հայկազյան բառարանի հեղինակները:

³⁶ Ավելի մանրամասն տե՛ս Վարդանյան Յու., նշվ. աշխ., էջ 211: Թլկուրանցուց չեն վերցվել հետևյալ բառերը. Ալվար /համաձայն, բավարար, գոհ/, Անախում, Անախուն /անհաշիվ/, Խերիաթ /բարիք/, Կլափ /ծնոտ/: Իսկ Ֆրիկի դիվանից չվերցված բառերն ավելի շատ են, Աղիպաթ /վախճան, հետևանք/, Անշառափ /հանգիստ, խաղաղ/:

³⁷ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմահամեմատական քերականության հիմունքները (ՀՄՍՈ. ԳԱ Տեղեկագիր, հաս. գիտությունների, 1985, № 1, էջ 62):

ИССЛЕДОВАНИЯ ПО ЛЕКСИКОГРАФИИ СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

МОХАММАД МАЛЕК МОХАММАДИ (ИРИ, г. Исфаган)

Резюме

Лексикография среднеармянского языка восходит к сравнительно позднему периоду. Известный армянский лингвист Нораир Бюзандаци в 1885 г. составил словарь среднеармянского языка, который был издан в 2000 г. В ряду словарей среднеармянского языка следует отметить неизданный словарь Й. Карста "Wörterbuch des Mittelarmerischen", составленный в 1940-1942 гг., и "Словарь среднеармянского языка" Р. Казаряна и Г. Аветисяна, который в виде двухтомника был издан в 1978 и 1992 гг., а в 2009 г. был переиздан как однотомник. При всех своих недочетах эти три словаря являются серьезным вкладом в армянское языкознание и в изучение среднеармянского языка. Авторами словарей была разработана оригинальная методика, ставшая основой их составления.

LEXICOGRAPHIC RESEARCHES ON MEDIEVAL ARMENIAN LANGUAGE

MOHAMMAD MALEK MOHAMMADI (IRI, ISFAHAN)*

Abstract

The lexicography devoted to the vocabulary of Middle Armenian originates relatively in late period. Armenian famous linguist Norayr Byuzandaci was the first who in 1885 wrote the dictionary of the Medieval Armenian, which is published in 2000. Other dictionaries devoted to the vocabulary of the Medieval Armenian are the unpublished vocabulary of Y. Karst titled «WÖRTERBUCH DES MITTELARMENISCHEN» /1940-1942/ and "The dictionary of Middle Armenian" by the authors of R. Ghazaryan and H. Avetisyan, which at first in 1978, and then in 1992 was published in two volumes, then in 2009 was republished in one volume. The above mentioned three dictionaries with their advantages and disadvantages and due to the hard works of the authors have their great investment in the sphere of Armenian linguistics and Medieval Armenian researches. The authors have made up the dictionary of the Middle Armenian with special approach, method and purpose.

* Department of Armenian Language and Literature, University of Isfahan, IRI.